ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ

ՈՒՐԻՇԻ, ՄՅՈՒՍԻ ԽՆԴԻՐԸ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Ամեն մի գրողի արվեստ հմայում է ոչ միայն իր ինքնատիպությամբ ու բացառիկությամբ, այլ նաև մի շատ կարևոր առանձնահատկությամբ: Ո՞վ է մարդը նրա ստեղծագործության մեջ և ինչպե՞ս է պատկերված:

Աղասի Այվազյանը՝ խիստ ինքնատիպ, տաղանդավոր արձակագիրը, դրամատուրգը, էսսեիստը, կինոսցենարիստը, նոր խոսք ասաց կյանքի ու տառապանքի, ցավի ու երջանկության, սիրո ու տագնապի, մարդու գոյի ու ճակատագրի, ցեղի ու տոհմի շարունակության մասին: Նա գրականություն բերեց հետաքրքրաշարժ հերոսների, բազմաբարդ բնավորությունների խառնարան, հայտնաբերեց աշխարհն ու նրա բնակչին անսահման սիրող, լքված ու միայնակ, իր հոգու ներսույզը և իրեն գնահատող հակասական, բարի, երբեմն մեղսագործ ու անպաշտպան մարդուն:

Հաճախ շատ մոտ գտնվելով պատմողին՝ գրողն իր աշխարհայացքի լավագույն մասունքներն է նվիրում նրան, ցույց տալիս այն ոգեղեն հարստությունը, որ վաղուց կուտակվել է իր ներսում: «Գրականությունը,- գրում է Այվազյանը,- սկսվում է խղճի ձայնից: Ասածս պարզունակ բարոյականություն չէ: Խոսքս մարդու էության մասին է: Գրողն իր ներսում պայքարում է իր կոմպրոմիսների դեմ. դա գերմարդկային ճիգ է, իսկական մարդու հավերժական ձգտումը, բարձրագույնի որոնումը, մարդ ապրելու միակ ելքը»[1]: Այվազյանի հերոսների, կերպարների և բնավորությունների շքեղ պատկերասրահում ուշադրության արժանի է դեպի Մյուսը, Ուրիշը ձգտող մարդը, որ գերխնդիր է մի շարք ստեղծագործություններում («Հուդայի երկա՞ր, երկա՞ր չարչարալից կյանքը», «Միայնակ դելֆինը», «Թթի ամիսը», «Ալիբի», «Սուլեգ», «Թույլերը և թույլերը» և այլն):

Չափազանց բարդ խառնվածքով և բնավորության բազմաշերտ կառուցվածքով հերոսը ձգտում է դեպի Ուրիշը՝ Մյուսը: Այս դժվարընթաց փնտրտուքների մեջ հերոսն անսովոր ապրումներ է ունենում, հաճախ լքվում, օտարանում և մեկուսանում, բայց, որպես կանոն, որը բնորոշ է Այվազյանի հիմնական՝ միջուկ կերպարին, գտնում է իրեն, թեկուզև հասկանում, որ ուրիշը չի կարող ոչ միայն հասկանալ և օգնել, այլև՝ ճանաչել: Այստեղից էլ՝ հերոսի ողբերգությունն ու դրամա. «Մի պահ ես ինձ ահավոր մենակ զգացի, զգացի, որ մարդը դատապարտված է նույնիսկ ամենամոտիկ մարդու կողմից չհասկացված լինելու վտանգին: Եթե մենք այսօր իրար ծաղիկներ տանք վայրկյանը փրկելու համար, մենք ավելի կամրացնենք մեր կեղևը: Այդ սարսափելի կեղևը, որ բանտի

խցիկի քարե պատերից էլ դաժան է և կործանարար: Այդ կեղևը մարդուն անզորության է մատնում, ամեն ինչ դարձնում է անիմաստ, մարդ ինքն իր դեմ է լինում և չի հասկանում այդ»[2],- այսպես է խորհում «Ես՝ իմ մայրը» պատմվածքի գլխավոր հերոսը:

Ուրիշին, Մյուսին ձգտող հերոսի կերպարում հստակ զգացվում է պատմողի (գրողի) սերը մարդու նկատմամբ: Մասնավորապես արժանահիշատակ է Խոսրոյի կերպարը «Պուճուր մի տեղ Բուդդայի կողքին» պատմվածքում, Հայրապետի կերպարը «Թքի ամիսը» պատմվածքում: Ութսունամյա Հայրապետը նույնանում է թքենուն և թուք պտուղին իր նվիրումով, քաղցրությամբ և ամրությամբ: Կերպավորված թուքը նույն մարդն է, որ ձգտում է Մյուսին և մայիսի 26-ին ժամը չորսին հասնելով Երևանում՝ սկսում է թքի ամիսը, պրկում երակները, տարածում թևերը, բացում սաղարթը, շարժում արյունը և «ձեռնարձակ հանձնվում» աշխարհին: Նույնպիսին է նաև պատմվածքի հերոսը, որ մարդկանց կարող է միայն իր սիրով «անհանգստացնել»:

«Ընդհանրապես,- գրում է Ս. Հարությունյանը,-Աղասի Այվազյանի համար բնորոշ մի գիծ է՝ ցույց տալ մարդկանց կապվածությունը: Որքան էլ նրանք արտաքինից թվում է, թե հեռու են իրարից, էլի մի ներքին անբացատրելի կապ ունեն:- Այվազյանն ասում է, որ մարդուն հատուկ է կապվածությունը. առանց դրա նրանք չեն կարող ապրել»[3]:

«Թույլերը և թույլերը» պատմվածքի գլխավոր հերոսը, որն անանուն է, ավելի ճիշտ պատմողն ինքն է իր համար հայտնաբերել թվացյալ իր ընկերոջը՝ Ֆելիքսին, բայց վերջինս նույնիսկ չի էլ նկատում նրան: Ընկերության տենչով մարդը երջանիկ է Մյուսի գոյության հայտնաբերմամբ, բայց դա դեռ շատ քիչ է և ոչ էլ՝ փրկություն:

Չկա Մյուսի (Ֆելիքսի) կողմից գնահատման փաստը: Մյուսը չի էլ նկատում, որ իրեն տեսնում են ու գնահատում: Ինքնատիպ ապրումներ ու խոհեր են պաշարում պատմողին. «Տարածության վրա ես զգում էի մեր հոգեհարազատությունը, իմ բոլոր տվայտանքների պատասխանը և ներդաշնակ աշխարհ դուրս գալու միակ հնարավորությունը: Մի անգամ, նույնիսկ, նրա ճամփան կտրելով, ցցվեցի դիմացը, բայց նա մի փափուկ հայացքով ինձ չտեսավ և շարունակեց ճանապարհը: Երբեմն որոշում էի ուղղակի կռվել նրա հետ, ծեծել նրան կամ ծեծվել՝ մի կերպ շփվելու համար, սակայն դա անհնար էր դառնում ամեն անգամ նրան հանդիպելիս»[4]:

Մեկ այլ պատմվածքում, որ կոչվում է «Խայծը», մարդը չի հավատում Մյուսին: Որդն ապրում է հողի մեջ՝ մշտապես հիանալով լույսով: Երբ նրան հանում են փափուկ հողաշերտից և դնում տուփի մեջ՝ որպես խայծ, խղճում է արդեն ինքն իրեն: Այդ վիճակում անգամ պատրաստ է օգնել Մյուսին: Խնդրում

է է ձկնիկին, որ չուտի իրեն: «Սակայն վերջինս ամեն ինչ իմացողի ժպիտով ինձ առավ իր բերանը: Ես երկար ժամանակ զգում էի, թե ինչպես է կարթը նրան ծգում վեր ու այդ ժամանակ մի բան էր ինձ հետաքրքրում՝ գոնե հիմա հասկացա՞վ, որ ես ճշմարտություն էի ասում»[5]:

«Հուդայի երկա՞ր, երկա՞ր չարչարալից կյանքը» պատմվածքում ևս, ինչպես «Թույլերը և թույլերը» պատմվածքում, մարդը փնտրում է Ուրիշին՝ Մյուսին: Հերոսի համար այն նախ հարևանն է, հոգեբույժը, որ փորձ չի անում անգամ հասկանալու իր «հիվանդին»:

Այսպիսով՝ մարդը խորշում է ոչ միայն քար աշխարհից, այլև ինքն իրենից: Կառչելը մարդկանց ոչինչ է տալիս: Նա ավելի է խճճվում բարդ ու անհասկանալի կյանքի լաբիրինթոսում: Լինում էին պահեր, երբ սպանության գաղափարն էր հարազատանում, որից էլ սարսափում է, բայց հասկանում ամենակարևորը. «Ինձ Ուրիշներ էին պետք: Ինձ Օգնող էր պետք: Բայց ու՞ր գնայի, ի՞նչ պիտի ասեի՝ որ սպանե՞լ եմ ուզում»[6]: Իրականում ոչ թե սպանում է Ուրիշին, այլ ընկնում է հոգեբանական բարդ հոգեվիճակի մեջ, հիշում իր ամբողջ կյանքը և ամենակարևորը. նստում է «քննիչի» առջև և պատմում իր չարչարալից կյանքի դրվագներն ու մանրամասները: Եվ քննիչը անտարբերությունը նույն անտարբերությունն է լուռումունջ Աշխարհի: Քննիչը նույն Ուրիշն է, որ չի հասկանում Մյուսին՝ իրեն ձգտողին, որը դավաճանել ու սպանել է ինքն իրեն և արդեն որպես «Հանցագործ» պատժի է սպասում: Իսկ ինչու՞ Հուդա: Որովհետև մարդը դավաճանել է իր ներսի Մարդուն, մատնել իր հոգին ողջ Աշխարհին, մերկացրել այն օտար, անտարբեր ու «լուռ» մարդկանց: Մեկ այլ՝ «Տագնապներ» ինքնատիպ վերնագրով պատմվածքի հերոսուհին՝ Մարգալիտան, լսում է տեր Մինասին և ապշում, որ «տղամարդը կարող է իրենից ոչինչ չպահանջել և այսքան անհասկանալի և անծանոթ մեղքերի մեջ խոստովանել»[7]: Հետաքրքիր դիտարկում է անում Բախտինը, երբ գրում է. «Որքան շերտեր է հարկավոր հեռացնել ամենամերձավորի դեմքից՝ լավ ծանոթ, ըստ երևույթին, շերտեր, որ նրա դեմքը ծածկել են մեր կենսական հակազդումները, հարաբերություններն ու պատահական վիճակները, որպեսզի տեսնենք նրա ճշմարիտ և ամբողջական դիմապատկերը: Եվ արվեստագետի պայքարը հերոսի որոշակի և կայուն կերպարի համար պայքար է առաջին հերթին ինքն իր հետ»[8]: «Երաժշտական զանգ հին ինտելիգենտի տանը» պատմվածքում հերոսին այդպես էլ չի հաջողվում խոսել ի սրտե, ներկայացնել «վաղուց կուտակվածը»: Նրան պարզապես «չեն լսում»: Եվ որքան էլ ասի, թե «աշխարհում մի խոսք կա, միայն կարևոր ասելիք... ես իմ կյանքում շատ եմ խոսել, բայց ոչինչ չեմ ասել... Ու ներսս պայթում է...»[9], միևնույն է, նրան ոչ ոք չի էլ ուզում լսել: Ղևոնդը, որը արժևորել է խոսքը՝ կարևոր, ինքնամատույց, նույնպես չի հաս-

կացվում մյուսների կողմից: Այսպիսին է Այվազյանի ինքնատիպ հերոսը: Այսպիսի վիճակում է հաճախ գրողը տեսել մարդուն:

Այսպիսի ճակատագիր ունեն Այվազյանի ստեղծագործությունների շատ հերոսներ: Նույնն է գեղարվեստական միջավայրը, կերպարի գեղագիտական ընկալումը, հերոսի ներքին ողբերգությունն ու ցավը: Մարդը փնտրում է, որ գտնի Մարդուն՝ Մյուսին: Իսկ որտե՞ղ է պատմողը: Ինչպե՞ս է կարեկցում և միջամտում: Այս խնդիրը լուծելու համար դիմենք մի քանի պատմվածքների: «Ալիբի» պատմվածքում պատմողը երևում է վերջում՝ ամբողջացնելով հիմնական գաղափարը: Մարդը պիտի հիշի Մյուսին: Սրանով արդեն պիտի փրկի նրան: Հանցանքի մեջ մեղադրվողին պիտի փրկի մեկ ~~նախադասություն~~: Բայց. «Ես նրան չեմ տեսել,- վերջապես արտաբերեցի գլխահակ:

- Ինչը՞ չես տեսել... նորեն զարմացավ Գոյարարը:- Աշխարհը՞...
- Այո... գլուխս տմբտմբացրի ես:
- Բայց նա քեզ տեսել է... ասաց քննիչը:

Ես սթափվեցի:

- Ո՞վ՝ նա:
- Մեղադրյալը»[10]:

Չի հասկացվում նաև «Փառահամարը» պատմվածքի հերոսի՝ Ձեռնածուի նվիրվելը Մյուսներին: Նա հետաքրքրում է մարդկանց այնքան ժամանակ, որքան որ սովորական է նրա հնարքը, և դադարում է այդ սքանչացումը, երբ գալիս է իսկական հրաշքը՝ նվիրումը: Երբ փորձում է իր արվեստով ավելի զարմացնել, այսինքն՝ ամբողջ կրկեսը ծիրը լցնել, այդ վայրկյանից սկսած՝ նա դառնում է անհետաքրքիր, ծանձրալի և նույնիսկ՝ զավեշտական: Ինքնատիպ է նաև գրողի վերաբերմունքը այս տիպի կերպարների կարևորությունը ցույց տալու, առհասարակ գրականության մեջ նրանց տեղն ամրագրելու գործում: Պատմողը հաճախ սքանչանում է իր ներկայացրածով: Կերպարի ներսը պեղելը և հայտնաբերածը յուրովի ներկայացնելը դառնում է գրողի ուսումնասիրության և հետաքրքրության հիմնական առարկան: «Ամեն մի գրական հերոս,-գրում է Ն. Մուրադյանը,- իր հեղինակի երազների պտուղն է, նրա թշնամին, նրա բարեկամը: Մտահղացման առաջին իսկ օրից նա տանջում, խոշտանգում է իրեն երկնողի մարմինն ու հոգին, այցելում, երբ ինքն է հրավիրում, հայտնվում այլևայլ կերպարանքներով, դիմադրում է, կամակորություններ անում, ընդվզում նրա կամքին, խորհուրդներին, փոխում է նրան՝ փոխվելով ու վերածնվելով ինքը, մինչև որ վերջանա ու վերջնականապես պոկվում է նրանից, հեռանում՝ դառնալով նրա ոչ թե զավակը, այլ հենց հոգեզավակը»[11]:

Ուրիշի, Մյուսի կերպարը հոգեբանական շարժման մեջ դնելը ուժգնացնում է Այվազյանի պատումի բովանդակությունը՝ տալով նրան ոգեղեն

կերտվածք: Հերոսների ձգտումը դեպի Մյուս մարդն առանցքային է Այվազյանի ստեղծագործություններում: Պատմողի հայացքը դեպի Մարդն է՝ նրա նկատմամբ ունեցած անսահման սիրով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Այվազյան Ա., Մեծ գրականության ճանապարհին// Գրական թերթ, Ե., 1971, թիվ 20:
[2] Այվազյան Ա., Ընտիր երկեր, Ե., Նաիրի, 2007, էջ 76:
[3] Հարությունյան Ս., Գրախոսություն Ա. Այվազյանի «Ընտանիքի հայրը» գործի մասին // Սովետական գրականություն, 1967, թիվ 7, էջ 147:
[4] Այվազյան Ա., Թթի ամիսը, Ե., Խորհրդային գրող, 1989, էջ 37:
[5] Այվազյան Ա., Հատիսի ակրոբատները, Ե., Արևիկ, 1988, էջ 25:
[6] Այվազյան Ա., Երկրի վրայի զբաղմունքը, Ե., Նաիրի, 1993, էջ 94:
[7] Այվազյան Ա., Ընտիր երկեր, Ե., Նաիրի, 2007, էջ 252:
[8] Бахтин М.,Эстетика словесного творчества, М.,Искусство, 1986, стр.10:
[9] Այվազյան Ա., Ընտիր երկեր, Ե., Նաիրի, 2007, էջ 89:
[10] Այվազյան Ա., Ալիքի, Ե., Նոր-Դար, 2000, էջ 37:
[11] Մուրադյան Ն., Աբովյանի պոետիկան, Ե., Սովետական գրող, 1979, էջ 255: